

Այս աւանդութիւնը որ Եսայի մարգարէին գերեզմանը և նահատակութեան տեղը Յովսափատի մէջ կը դնէ՝ շատ հին է. կը վկայեն Որոզինէս և Յերոնիմոս իր Եսայեայ մեկնութեան մէջ: Եսայեայ մարգարէին գերեզմանին մօտ Հայերն ունէին Նորալիւնի անունով վանք մը, որ շատ դարերէ ի վեր քանդուած է: Վերջին տարիներուն Սիլովամի քարայրներուն մէջ գրտնուած է յունարէն արձանագրութիւն մը, նուիրուած Եսայի մարգարէի յիշատակին:

Չ. ՉԻԹԵՆԵԱՅ ԼԵՌԸ

Չիթենեաց լեռը արաբերէն կը կոչուի Ճիպիզ կըրուր, անուն մը որ կը նշանակէ ընծիւր ընդ կամ սուրբ ընդ, որ հասարակ է Թաբոր, Գարիզիմ և Սինա լեռներուն: Այս փոքր շղթան կը տարածուի գուգահեռաբար մինչեւ Տաճարի բլուրը որ բաժնուած է Կեդրոնի հեղեղատով: Լեռան ելեւէջները կը կազմեն երեք որոշ բարձրութիւններ: Հիւսիսայինը որ բարձրագոյնն է կը կոչուի Գալիլիայի ընդ՝ ԺԳ. դարէն սկսեալ, և Արի Գալիլիայի՝ ԺԳ. դարէն: Արաբացիք կը կոչեն զայն Բարս կս Սայաս, Այգի որսորդին: Լեռան կեդրոնը (808 մ.) Տիրոջը Համբարձման աւանդական տեղն է: Ան կը նայի Տաճարին հարթավայրին վրայ որ ուղիղ գծով 700 մ. հեռու է: Հարաւային կողմը կայ ուրիշ բլուր մը որ մասնաւոր անուն մը չի կրեր և կը պարունակէ Մարգարից Գերեզմանը:

Չաքարիայի մարգարէութեան մէջ (ԺԳ. 4) նոյն